ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

## Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ԾԱՂԿԱՀՈՎԻՏ

## համայնք

## (Ծաղկահովիտ, Բերքառատ, Գեղադիր, Գեղաձոր, Գեղարոտ, Լեռնապար, Ծիլքար, Հնաբերդ, Նորաշեն և Վարդաբլուր բնակավայրեր)

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

Ծաղկահովիտ խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 10 գյուղ՝ Բերքառատ, Գեղադիր, Գեղաձոր, Գեղարոտ, Լեռնապար, Ծաղկահովիտ (համայնքի կենտրոն), Ծիլքար, Հնաբերդ, Նորաշեն, Վարդաբլուր:

Համայնքը կազմավորվել է նախկին Ծաղկահովիտի շրջանի՝ գերազանցապես հայ ազգաբնակչությամբ բնակեցված գյուղերի միավորմամբ և նպատակ ունի տարածաշրջանում կազմավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն՝ նպաստելով տարածքների համաչափ զարգացմանը և ապահովելով հանրային ծառայությունների հասանելիությունը համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակիչների համար:

Համայնքում բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 11251 մարդ, վարչական տարածքը կազմում է 16275 հա:

***<u>Փնջի ընդհանուր նկարագիրը</u>***

Համայնքի գյուղերը տեղաբաշխված են Արագածոտնի մարզի հյուսիսային հատվածում՝ Արագած լեռան հյուսիսային լանջերի և Փամբակի լեռների միջև ընկած սարավանդում: Տարածաշրջանի բոլոր բնակավայրերը բարձրլեռնային են (ծովի մակերևույթից ավելի քան 2000մ բարձրության վրա), բացառությամբ Նորաշենի, որը տեղաբաշխված է 1950մ նիշի վրա:

Ըստ այդմ, ձմեռները տևական են, կայուն ձնածածկույթով և -6-8°c միջին ջերմաստիճանով, ամառները՝ համեմատաբար մեղմ և բարեխառն կլիմայով, 16-18°c միջին ջերմաստիճանով: Բնական լանդշաֆտները հիմնականում սևահողային տափաստաններ են:

Բնակչության զբաղվածության հիմնական ուղղություններն են անասնապահությունը, ինչպես նաև բանջարաբոստանային, հացահատիկային ու կերային կուլտուրաների մշակումը: Տարածաշրջանում գործնականում բացակայում են արտադրական կարողությունները:

Համայնքի գյուղերի մակարդակում կարևորվում են հատկապես խմելու և ոռոգման ջրագծերի և գյուղամիջյան ճանապարհների նորոգումը:

Տարածաշրջանում քաղաքային բնակավայրի կամ տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնի բացակայությունը բացասաբար է անդրադառնում հանրային ծառայությունների հասանելիության վրա:

***Համայնքի փխյալների համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

*<u>1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.</u>*

Տարածաշրջանի բոլոր բնակավայրերը գյուղեր են, որոնցից առավելագույն բնակչություն ունի Հնաբերդը (2231), նվազագույնը՝ Լեռնապարը (576 բնակիչ): Խոշորացվող համայնքի բոլոր բնակավայրերում 2001-2016 թվականներին բնակչության թվաքանակի աճ է արձանագրվել, ինչը շոշափելի դրական գործոն կարելի է համարել (Աղյուսակ 1): Ընդհանուր առմամբ, նշված ժամանակահատվածում տարածաշրջանի բնակչությունն աճել է 16 տոկոսով:

Չնայած Ծաղկահովիտ գյուղի բնակչության թվաքանակը որոշ չափով պակաս է համայնքների խոշորացման չափորոշիչով սահմանված թվից, նախկին շրջկենտրոն լինելու հանգամանքը որոշակի դրական նախադրյալներ է ստեղծում այն որպես համեմատաբար կարողունակ համայնքի կենտրոն ձևավորելու համար՝ հաշվի առնելով նաև որոշակի ենթակառուցվածքների (օրինակ՝ հիվանդանոց, մշակույթի տուն և այլն) առկայության հանգամանքը:

Աղյուսակ 1. Ծաղկահովիտ խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք | Նախկին վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Ծաղկահովիտ | 1699 | 1706 | 2145 | 126 | 126 |
| 2 | Բերքառատ | 1748 | 925 | 1035 | 112 | 59 |
| 3 | Գեղադիր | 1224 | 649 | 703 | 108 | 57 |
| 4 | Գեղաձոր | 1335 | 1099 | 1333 | 121 | 100 |
| 5 | Գեղարոտ | 1479 | 547 | 627 | 115 | 42 |
| 6 | Լեռնապար | 1789 | 534 | 576 | 108 | 32 |
| 7 | Ծիլքար | 1422 | 562 | 616 | 110 | 43 |
| 8 | Հնաբերդ | 2274 | 1963 | 2321 | 118 | 102 |
| 9 | Նորաշեն | 2221 | 1141 | 1247 | 109 | 56 |
| 10 | Վարդաբլուր | 1084 | 577 | 648 | 112 | 60 |
| | Ընդամենը/միջինը/ | 16275 | 9703 | 11251 | 116 | 69 |

Տարածաշրջանում բնակչության խտության ցուցանիշը (69 մարդ/քառ.կմ) գրեթե 2 անգամ պակաս է հանրապետության միջին ցուցանիշից, այսուհանդերձ, այն շոշափելիորեն ավել է՝ բարենպաստ կենսամիջավայրի համար անհրաժեշտ նվազագույն խտությունից:

*2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման*

Ծաղկահովիտի կազմում ներառվող նախկին համայնքներից պետական սեփականության գյուղատնտեսական հողեր /հիմնականում՝ արոտավայրեր/ առկա են միայն Ծաղկահովիտ և Գեղաձոր համայնքներում՝ համապատասխանաբար 1040 և 1064հա (Աղյուսակ 2): Մասնավոր և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերի գերակշիռ մեծամասնությունը վարելահողեր են, որոնք օգտագործվում են բանջարաբոստանային, հացահատիկային և կերային մշակաբույսերի աճեցման համար: Առկա են նաև արոտներ և խոտհարքներ:

Մեկ բնակչի հաշվով մասնավոր սեփականության հողերի ամենամեծ ծավալները նախկին Ծիլքար համայնքում են (1,21 հա), համայնքային սեփականության հողերինը, ինչպես նաև մասնավոր և համայնքային սեփականության հողերի գումարային ծավալները՝ նախկին Լեռնապար համայնքում (համապատասխանաբար 1,68 և 2,77հա):

Խոշորացվող Ծաղկահովիտ համայնքում մասնավոր և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերը մեկ բնակչի հաշվով կազմում են 1,27 հա, այսինքն, դրանք 0.41հա-ով ավելի են հանրապետության միջին ցուցանիշից:

Խոշորացվող համայնքում կան նաև անտառային նշանակության հողեր, որոնց մոտ 70 տոկոսը գտնվում է նախկին Ծաղկահովիտ և Վարդաբլուր համայնքների տարածքներում:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Ծաղկահովիտ խոշորացվող համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016թ. | Գյուղատնտեսական հողեր (հա) | | | | | | | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 բնակչի հաշվով | | | | | | |
| | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Ընդամենը | պետական սեփականություն | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 1 | Ծաղկահովիտ | 2145 | 566,8 | 683,4 | 1040,4 | 0,26 | 0,32 | 0,58 | 0,49 | 20,1 | 237,3 | 52,2 |
| 2 | Բերքառատ | 1035 | 1101,3 | 531,3 | 0,0 | 1,06 | 0,51 | 1,58 | 0,00 | 1,6 | 0,0 | 14,2 |
| 3 | Գեղադիր | 703 | 526,4 | 593,1 | 0,0 | 0,75 | 0,84 | 1,59 | 0,00 | 1,3 | 0,0 | 3,4 |
| 4 | Գեղաձոր | 1333 | 666,0 | 510,6 | 1064,0 | 0,50 | 0,38 | 0,88 | 0,80 | 1,5 | 0,0 | 7,5 |
| 5 | Գեղարոտ | 627 | 711,9 | 667,3 | 0,0 | 1,14 | 1,06 | 2,20 | 0,00 | 18,9 | 0,0 | 11,4 |
| 6 | Լեռնապար | 576 | 631,5 | 965,5 | 0,0 | 1,10 | 1,68 | 2,77 | 0,00 | 6,8 | 58,3 | 17,1 |
| 7 | Ծիլքար | 616 | 746,2 | 519,6 | 0,0 | 1,21 | 0,84 | 2,05 | 0,00 | 5,6 | 93,7 | 6,0 |
| 8 | Հնաբերդ | 2321 | 901,9 | 1062,3 | 0,0 | 0,39 | 0,46 | 0,85 | 0,00 | 30,6 | 0,0 | 13,3 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | Նորաշեն | 1247 | 722,8 | 1313,1 | 0,0 | 0,58 | 1,05 | 1,63 | 0,00 | 1,9 | 0,0 | 11,1 |
| 10 | Վարդաբլուր | 648 | 640,9 | 262,3 | 0,0 | 0,99 | 0,40 | 1,39 | 0,00 | 1,3 | 107,2 | 5,2 |
| | Ընդամ/միջին | 11251 | 7215,7 | 7108,5 | 2104,4 | 0,64 | 0,63 | 1,27 | 0,19 | 89,5 | 496,5 | 141,5 |

Նոր կազմավորվող համայնքում առկա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 141,5 հեկտար հողերից 52,2 հեկտարը գտնվում է Ծաղկահովիտ բնակավայրում, ինչը համայնքի կենտրոնի համար զգալի դրական գործոն է հանդիսանում: Այդ հողերի համար կարող են մշակվել արտադրական կարողությունների զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրեր:

*3. Համայնքների խոշորացման պեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման*

Երեք տարվա (2013-2015 թ.թ.) միջինացված ցուցանիշով սեփական եկամուտները հանրապետական միջինից բարձր են եղել միայն նախկին Գեղարոտ, Լեռնապար և Ծիլքար համայնքներում, մնացած համայնքներում դրանք ավելի ցածր են, քան միջին հանրապետականը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Ծաղկահովիտ համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Հաշվառված բնակչություն 2016թ. | Սեփական եկամուտ: 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ/ | Սեփական եկամուտ: 1 բնակչի հաշվով |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ծաղկահովիտ | 2145 | 11308 | 5,3 |
| 2 | Բերքառատ | 1035 | 6756 | 6,5 |
| 3 | Գեղադիր | 703 | 3249 | 4,6 |
| 4 | Գեղաձոր | 1333 | 7281 | 5,5 |
| 5 | Գեղարոտ | 627 | 5504 | 8,8 |
| 6 | Լեռնապար | 576 | 4552 | 7,9 |
| 7 | Ծիլքար | 616 | 7267 | 11,8 |
| 8 | Հնաբերդ | 2321 | 7291 | 3,1 |
| 9 | Նորաշեն | 1247 | 5952 | 4,8 |
| 10 | Վարդաբլուր | 648 | 4223 | 6,5 |
| | Ընդամենը/միջինը/ | 11251 | 63382 | 5,6 |

Խոշորացվող համայնքի կտրվածքով մեկ բնակչի հաշվով սեփական եկամուտները կազմել են 5,6 հազար դրամ, ինչը 1,7 հազար դրամով պակաս է հանրապետական միջին ցուցանիշից: Նախկին Ծաղկահովիտ համայնքում այն կազմել է 5,3 հազար դրամ:

*<u>4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը</u>*

Քանի որ տարածաշրջանում չկա համայնքների խոշորացման չափանիշներին համապատասխան բնակչության թիվ ունեցող բնակավայր, տրանսպորտային կապերի գնահատականը տրված է ներկայումս մինչև մոտակա քաղաք (հանրային ծառայությունների ամբողջական շրջանակի հասանելիություն) և նոր ձևավորվող համայնքի կենտրոն հասնելու համար ծախսվող ժամանակի համեմատության հիման վրա:

Նկատի ունենալով տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, խնդրո առարկա տարածությունններն անցնելու համար անհրաժեշտ ժամանակի նկատմամբ կիրառվել է 1,2 գործակից (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Ծաղկահովիտ համայնքում

| | Բնակավայր /համայնք/ | Բարձրությունը ծովի մակերևույթից | Հեռավորութ. մոտակա քաղաքից | | Հասանելիություն | Հեռավորութ. համայնքի կենտրոնից | | Հասանելիություն | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Ծաղկահովիտ | 2100 | 20,1 | 21 | ՍԲ | 57,1* | 70,8 | - | Ընթացիկ նոր. |
| 2 | Բերքառատ | 2080 | 26,8 | 25,2 | ՍԲ | 9,6 | 20,4 | ՍԲ | Հիմնանորոգ. |
| 3 | Գեղադիր | 2025 | 28,8 | 37,2 | ԱՆԲ | 11,6 | 13,2 | Բ | Հիմնանորոգ. |
| 4 | Գեղաձոր | 2190 | 25,3 | 30 | ԱՆԲ | 8,1 | 14,4 | Բ | Հիմնանորոգ. |
| 5 | Գեղարոտ | 2060 | 19,4 | 32,4 | ԱՆԲ | 15,1 | 18 | ՍԲ | Բավարար |
| 6 | Լեռնապար | 2140 | 26,5 | 36 | ԱՆԲ | 22,2 | 32,4 | ԱՆԲ | Հիմնանորոգ |
| 7 | Ծիլքար | 2150 | 21,2 | 36 | ԱՆԲ | 16,9 | 18,4 | ՍԲ | Բավարար |
| 8 | Հնաբերդ | 2150 | 28,6 | 25,2 | ՍԲ | 11,5 | 14,4 | Բ | Բավարար |
| 9 | Նորաշեն | 1950 | 31,5 | 31,2 | ԱՆԲ | 14,3 | 18 | ՍԲ | Ընթացիկ նոր. |
| 10 | Վարդաբլուր | 2075 | 17 | 22,8 | ՍԲ | 5,6 | 12 | Բ | Հիմնանոր. |

*Հապավումներ. Բ-Բարենպաստ, ՍԲ-սահմանափակ բարենպաստ, ԱՆԲ-անբարենպաստ*

**համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից*

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ներկայումս տարածաշրջանի գյուղերից մինչև մոտակա քաղաք (Ապարան) հասնելու համար ծախսվող ժամանակը անբարենպաստ է 6 գյուղում, սահմանափակ բարենպաստ՝ 4 գյուղում, ոչ մի բնակավայր չունի բարենպաստ հասանելիություն: Ծաղկահովիտ բնակավայրը համայնքի կենտրոն դիտարկելու և հանրային ծառայությունների ամբողջական շրջանակ ապահովելու պարագայում բարենպաստ և սահմանափակ բարենպաստ հասանելիության տիրույթում կգտնվեն 4-ական բնակավայր և միայն Լեռնապար գյուղի համար այդ ցուցանիշը կլինի անբարենպաստ:

Նշված խնդիրը կարելի է լուծել Հ21 հանրապետական նշանակության մայրուղու և Ծաղկահովիտ գյուղի ճանապարհի հատման մասում՝ դեպի Գեղարոտ գնացող դաշտամիջյան ճանապարհը ասֆալտապատելով, ինչի արդյունքում վերջինս և Ծիլքարը նույնպես կհայտնվեն բարենպաստ հասանելիության տիրույթում, իսկ Լեռնապարը՝ սահմանափակ բարենպաստության տիրույթում:

*5.Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ*

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերից մանկապարտեզ կա միայն Ծաղկահովիտում (80 տեղ, 52 երեխա, վիճակը՝ բավարար):

Մշակույթի տուն ունեն Ծաղկահովիտ (300 տեղ, ընթացիկ նորոգման կարիք), Բերքառատ (300 տեղ, վիճակը՝ բավարար), Գեղաձոր (170 տեղ, մասնակի նորոգման կարիք), Լեռնապար (250 տեղ, վիճակը՝ բավարար), Հնաբերդ (400 տեղ, հիմնանորոգման կարիք) և Վարդաբլուր (250 տեղ, հիմնանորոգման կարիք) գյուղերը: Բացի այդ, Ծաղկահովիտում կա 400 տեղանոց դահլիճով ակումբ-կինոսրահ, որն ունի ընթացիկ նորոգման կարիք:

Երաժշտական, գեղարվեստի, արվեստի, սպորտային դպրոց չկա ոչ մի գյուղում:

Առողջապահական հաստատություններից՝ 80 մահճակալի համար նախատեսված հիվանդանոց կա Ծաղկահովիտում (տանիքը նորոգման կարիք ունի), բուժկետեր ունեն Բերքառատ (վիճակը՝ բավարար, գյուղապետարանի շենքում), Գեղաձոր (վիճակը՝ բավարար, մշակույթի տան շենքում), Գեղարոտ (վիճակը՝ բավարար), Լեռնապար (վիճակը՝ բավարար, համայնքի կենտրոնի շենքում), Ծիլքար (վիճակը՝ բավարար), Հնաբերդ (կառուցվող համայնքի կենտրոնի շենքում) և Վարդաբլուր (վիճակը՝բավարար) գյուղերը:

Համայնքի գյուղերում դպրոցական հաստատությունների վերաբերյալ տվյալները ներկայացված են 5-րդ աղյուսակում (համայնքի կազմում ընդգրկվող գյուղերում ավագ, միջին, հիմնական կամ տարրական դպրոցներ չկան):

Աղյուսակ 5. Ծաղկահովիտ համայնքի գյուղերի հանրակրթական հաստատությունները

| | Համայնք /բնակավայր/ | Միջնակարգ դպրոց | | |
|---|---|---|---|---|
| | | տեղ | աշակերտ | Վիճակը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ծաղկահովիտ | 700 | 220 | 2 մասնաշենքի տանիքի նորոգման կարիք |
| 2 | Բերքառատ | 270 | 80 | Ընթացիկ նորոգման կարիք |
| 3 | Գեղադիր | 180 | 90 | Բավարար |
| 4 | Գեղաձոր | 200 | 120 | Բավարար |
| 5 | Գեղարոտ | 200 | 56 | Ընթացիկ նորոգման կարիք |
| 6 | Լեռնապար | 180 | 72 | Բավարար |
| 7 | Ծիլքար | 500 | 78 | Ընթացիկ նորոգման կարիք |
| 8 | Հնաբերդ | 650 | 306 | Հիմնանորոգման կարիք |
| 9 | Նորաշեն | 290 | 140 | Հիմնանորոգման կարիք |
| 10 | Վարդաբլուր | 120 | 121 | Ընթացիկ նորոգման կարիք |
| | | 3290 | 1283 | |

Ենթակառուցվածքների տեղաբաշխումը բնակավայրերում ներկայացված է ստորև բերվող քարտեզի վրա:



Հապավումներ.-ՄՊ-Մանկապարտեզ, ՄԴ-Միջնակարգ դպրոց, ԲԿ-Բուժկետ, Հ-Հիվանդանոց, ՄՏ-Մշակույթի տուն, Ա-Ակումբ

Ակնհայտ է, որ ենթակառուցվածքների ամենալայն շրջանակը Ծաղկահովիտում է:

Համայնքների խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ պատկերը Ծաղկահովիտ համայնքի համար ներկայացված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6. Ծաղկահովիտ համայնքի խոշորացման պայմանների և չափանիշների ամփոփ գնահատական

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Կարելի է պայմանականորեն բավարար համարել՝ հաշվի առնելով բնակչության աճի գործոնը | Բնակչության թիվը 2001-2016թ.թ. աճել է 26 տոկոսով |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է՝ հանրապետության միջին ցուցանիշից զգալիորեն ավել | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար չէ՝ հանրապետության միջին ցուցանիշից պակաս է | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար է՝ հասանելիության | |

| | | | |
|---|---|---|---|
| | | անբարենպաստ տիույթում ընդամենը 1 գյուղ է | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Կարելի է պայմանականորեն բավարար համարել | Որոշ հատվածներում հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք կա |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար չէ | Մանկապարտեզ կա միայն Ծաղկահովիտում |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար է | Դպրոցների մեծ մասը ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Բավարար է | Ծաղկահովիտի հիվանդանոցը նորոգման կարիք ունի |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Բավարար է | |

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափանիշներից Ծաղկահովիտ խոշորացված համայնքը լիարժեքորեն բավարարում է 8-ին:

Հիմնական շեղումներն են՝

➢ համայնքի կենտրոնի բնակչության անբավարար թիվը, որը, սակայն, կարելի է պայմանականորեն բավարար համարել՝ հաշվի առնելով նաև բնակչության աճի միտումները,

➢ սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը պակաս է հանրապետության գյուղական համայնքների համարժեք միջին ցուցանիշից,

*Ծանոթություն. Խոշոր համայնքի փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայմանը սոսկ փեսականորեն է կիրարկելի, քանի որ հանրապեւությունում չկա ոչ մի ինքնաբավ համայնք, միաժամանակ, 1 բնակչի հաշվով սեփական եկամուփների միջինացված ցուցանիշը ևս (7300 դրամ) գործնականում չի կարելի բավարար համարել:*

➢ Եթե անմիջականորեն միջպետական և հանրապետական նշանակության ավտոմայրուղիներին հարող տարածքներում գտնվող գյուղերում ճանապարհների վիճակը կարելի է բավարար համարել, ապա դրանցից հեռացված գյուղերի ճանապարհները հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք ունեն:

➢ Մանկապարտեզների անբավարար քանակը, ինչը գործնականում բնորոշ է գյուղական բնակավայրերի գերակշիռ մեծամասնությանը:

***Որպես առկա շեղումները չեզոքացնելու հիմնական ուղղություններ պետք է դիտարկել՝***

- Հասանելիության ցուցանիշի բարելավելումը՝ Հ21 հանրապետական նշանակության մայրուղու և Ծաղկահովիտ գյուղի ճանապարհի հատման մասում դեպի Գեղարոտ գնացող դաշտամիջյան ճանապարհը ասֆալտապատելով,
- Միջբնակավայրային ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև կրթական, մշակութային և առողջապահության օբյեկտների ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքների իրականացումը:

Ցանկալի է որպես աջակցություն նոր կազմավորվող համայնքին սուբսիդավորել Ծաղկահովիտ խոշորացված համայնքի տարածքային զարգացման նախագծի մշակումը, ինչը թույլ կտա ավելի հստակեցնել համայնքի զարգացման առաջնահերթ միջոցառումներն ու գերակա ուղղությունները:

***Ծաղկահովիտ համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել փոշիացած ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների գծով կապիտալ ներդրման գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Վերը թվարկվածից զատ, նախադրյալներ կստեղծվեն Ծաղկահովիտ բնակավայրը որպես տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) լիարժեք կենտրոնի ձևավորման համար, ինչի արդյունքում համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակչության համար կապահովվի հանրային ծառայությունների հասանելիությունը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de